ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

- ***Վերաֆինանսավորման տոկոսադրույքը*** անփոփոխ է թողնվել՝ 7.25% (որոշում թիվ 225Ա):

- ***«Ամերիքըն էքսպրես» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 260Ա):

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Ռոուդ Լիդեր Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ և «Կոնվերս բանկ» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար թիվ 1 և «Կապան» մասնաճյուղերին (որոշումներ թիվ 262Ա, 1/1246Ա):

- ***Գրանցվել և լիցենզավորվել է*** «Գլոբալ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը, ինչպես նաև ***ուժը կորցրած են ճանաչվել*** «Կրեդիտ Յունիոն» և «Վաշինգթոն Քափիթալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունների վարկային կազմակերպության գործունեության լիցենզիաները (որոշում թիվ 267Ա):

- ***Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպության լիցենզիա է տրամադրվել*** «Ադալև Ռիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 270Ա):

- ***Ուժը կորցրած են ճանաչվել (դադարեցվել են)*** «Օջախ-Ե», «Ռուզվիգ» և «Հայկ Ղուկասյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշում թիվ 272Ա-274Ա):

- ***Գրավատան կազմակերպման լիցենզիաներ են տրամադրվել*** «Առդալին» և «Էռա Լայն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 275Ա, 276Ա):

- ***Ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառվել են*** «Մեդիա-Մոդել», «Միկսել», «Այ Բի էյ Սի», «Արա և Վահե», «Հինգ ուղի», «ԱԶԿ Գրուպ», «Տապան Լաս», «Վասկո դե Գամա», «Գասսամ», «Կասկադ Սերվիս», «Ֆրեդա», «Մար-Մոս», «Արթ Ֆորտրեսս», «Նայս Ըդվայս», «Ռադսես Վաչագան», «էյ ընդ Դի Թրեյդինգ», «Ռատս սերվիս», «Մունառո Պլյուս», «Սեյֆ Թրավել», «Գոլդեն Ռուլ», «Արմկոնտրակտ», «Վարդան-Անահիտ», «Եգոր Աշտարակ», «Արթին-Հրանտ», «Ռեկոն Փրինթ», «ՆՋՍ և Աքիլես», «Մուշ-Մոտորս», «Ռուզավ», «Հովհաննես Գրիգորյան և ընկերներ», «Պասսա-ՀՕ», «Բաշ», «Պավել և Հարութ եղբայրներ», «Դ.Գ.Ա.-Ռիելթի», «Գոսթ», «Լագու Բրոք», «Արագած բիզնես», «Միլենարի», «Կնոպկա», «Ծովատուր», «Ռոյալ Ինթերնեյշնլ գրուպ», «Քրեդիթ Բրոքերիջ քամփնի» սահմանափակ պատասխանատվությամբ, «Ապագա թեքնոլոջիս», «Հարավկովկասյան երկաթուղի», «Սթար Դիվայդ», «Կոնվերս բանկ»՝ փակ և «Ավտոդար», «Զարգացման Հայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերությունները (որոշումներ թիվ 1/1158Ա-1/1160, 1/1165Ա, 1/1167, 1/1169Ա=1/1173Ա, 1/1194Ա, 1/1195Ա, 1/1199Ա=1/1203Ա, 1/1259Ա, 1/1272Ա, 1/1281Ա-1/1289Ա, 1/1291Ա, 1/1296Ա, 1/1297Ա, 1/1299Ա, 1/1301Ա, 1/1368Ա, 1/1441Ա, 1/1442Ա, 1/1484Ա, 1/1486Ա-1/1489Ա, 1/1574Ա, 1/1168Ա, 1/1270Ա, 1/1485Ա, 1/1490Ա, 1/1271Ա, 1/1591Ա):

- ***Գրանցվել է*** «Սեֆ Ինտերնեյշնլ ունիվերսալ վարկային կազմակերպություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Գյումրի» մասնաճյուղը (որոշում թիվ 1/1266Ա):

- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 3 փակ բաժնետիրական, 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, 2 արտարժույթի փոխանակման կետերի, 1 արտադրական կոոպերատիվի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 5580000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/1241Ա, 1/1254Ա, 1/1388Ա, 1/1558Ա, 1/1560Ա, 1/1596Ա) և 2 փակ բաժնետիրական ընկերությունների, 5 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/1256Ա, 1/1557Ա, 1/1559Ա, 1/1562Ա-1/1566Ա):

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ և 96-րդ հոդվածի 2-րդ մասերը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ մասը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ, 70-րդ և 83-րդ հոդվածները, 182-րդ հոդվածի 2-րդ մասը, «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ, 4-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերը և ղեկավարելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» թիվ 166-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) նախաբանը ««Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ և 96-րդ հոդվածի 2-րդ մասերը,» բառերից հետո լրացնել ««Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ մասը,» բառերով:

2. Որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» Կանոնակարգ 8/03-ում (այսուհետև՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են բոլոր ընկերությունների վրա՝ բացառությամբ եթե օրենքով այլ բան է նախատեսված տվյալ տեսակի ընկերությունների համար, կամ կոնկրետ դրույթի

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. օգոստոսի 31-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.10.2010 թ. (ՀՀՊՏ N25 (377), 1.11.2010):

բովանդակությունից կամ էությունից բխում է, որ այն վերաբերում է կոնկրետ տեսակի ընկերությանը, կամ տվյալ տեսակի ընկերության նկատմամբ համապատասխան պահանջը սահմանելու իրավասություն օրենքով վերապահված չէ Կենտրոնական բանկին:»,

2) Կանոնակարգի 3-րդ կետը լրացնել 20-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«20. **ԱՊՊԱ, Բյուրո, Տեղեկատվական համակարգ, Երաշխավորման ֆոնդ, Բոնուս-Մալուս համակարգ՝** ըստ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակության:»,

3) Կանոնակարգը լրացնել 5.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5.1. Ընկերությունները պետք է ունենան տնային էջ, ընդ որում՝ սույն կանոնակարգի իմաստով ընկերության տնային էջ է համարվում վերջինիս պաշտոնական ինտերնետային կայքը, որի հասցեն ընկերությունը ներկայացնում է Կենտրոնական բանկ սույն կանոնակարգի 13-րդ կետով սահմանված կարգով: Սույն կետով նախատեսված տնային էջ ունենալու պահանջը չի տարածվում այն ընկերությունների վրա, որոնք, համաձայն իրենց կանոնադրության, հրապարակային առաջարկի միջոցով ծառայություններ չեն մատուցում ֆիզիկական անձանց: Բոլոր դեպքերում տնային էջ ունեցող բոլոր ընկերությունների տնային էջերը պետք է բավարարեն սույն գլխի պահանջներին:»,

4) Կանոնակարգի 9-րդ կետում «վերակառուցման, ընկերության մեղքով առաջացած պատճառներով» բառերը փոխարինել «վերակառուցման կամ ընկերության մեղքով առաջացած այլ պատճառներով» բառերով:

5) Կանոնակարգի 13-րդ կետում «ինտերնետային կայքի» բառերը փոխարինել «կայքի» բառով:

6) Կանոնակարգի 14-րդ կետը «ընկերությունը» բառից հետո լրացնել «կայքի» բառով:

7) Կանոնակարգի 16-րդ կետում.

ա. «գլխավոր (առաջին) էջում» բառերը փոխարինել «հասցեն մուտքագրելուց հետո հայտնվող առաջին էջում (ընկերության կայքի գլխավոր (առաջին) էջ) անմիջականորեն (ոչ թափվող մենյուի միջոցով)» բառերով,

բ. 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) Ֆինանսական համակարգի հաշտարար,»,

գ. լրացնել 11-րդ և 12-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11) Բյուրո (միայն ԱՊՊԱ իրականացնող ապահովագրական ընկերությունների համար),

12) Հաշվիչ (առկայության դեպքում):»:

8) Կանոնակարգի 18-րդ կետի 4-րդ ենթակետում «վերջին մեկ տարվա» բառերը փոխարինել «նախորդ 4 եռամսյակների» բառերով:

9) Կանոնակարգը լրացնել 21.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«21.1. Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցության նորմատիվները ներկայացվում են ըստ ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուսական ռուբլու՝ անկախ վերջիններիս արժեքից, իսկ մնացած արտարժույթների գծով լրացվում է միայն «Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը» սյունը:»:

10) Կանոնակարգի 25-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Կանոնադրական կապիտալի փոփոխության մասին տեղեկատվությունը՝ այդ փոփոխությունը Կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:».

11) Կանոնակարգը լրացնել 30.1-րդ, 30.2-րդ և 30.3-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«30.1. «Ֆինանսական համակարգի հաշտարար» բաժնում ներկայացվում են.

1) Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հասցեն,

2) Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի աշխատանքային ժամերը, կապի միջոցները,

3) Հղում Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի ինտերնետային կայքին:

30.2. **«Բյուրո»** բաժնում ներկայացվում են.

1) Բյուրոյի հասցեն,

2) Բյուրոյի աշխատանքային ժամերը, կապի միջոցները,

3) Հղում Բյուրոյի ինտերնետային կայքին:

30.3. **«Հաշվիչ»** բաժնում ներկայացվում են ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների սակագների, տոկոսադրույքների և այլ հաշվիչներ: Ընդ որում, ԱՊՊԱ իրականացնող ապահովագրական ընկերությունների համար՝

1) ԱՊՊԱ-ի գծով ապահովագրավճարների հաշվիչում ներառվող հարցադրումները, դրանց պատուհանների բացատրությունները պետք է լինեն հստակ և միանշանակ,

2) ԱՊՊԱ-ի գծով ապահովագրավճարների հաշվիչի բաժնում ներկայացվում են նաև կապի միջոցներ, որով սպառողները կարող են պարզաբանումներ ստանալ ԱՊՊԱ-ի գծով ապահովագրավճարների հաշվիչի հետ կապված հարցերի վերաբերյալ:»:

12) Կանոնակարգի 31-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3)Կանոնադրական կապիտալի փոփոխության մասին տեղեկատվությունը՝ այդ փոփոխությունը Կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում (սույն ենթակետի պահանջը չի տարածվում վճարահաշվարկային կազմակերպությունների և Կենտրոնական դեպոզիտարիայի վրա):»:

13) Կանոնակարգը լրացնել 42.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«42.1. ԱՊՊԱ-ի վերաբերյալ տեղեկատվական ամփոփագրերը, բացի սույն կանոնակարգի 42-րդ կետով նախատեսված տեղեկություններից, ներառում են նաև.

1) Բյուրոյի հասցեն, աշխատանքային ժամերը, կապի միջոցները, Բյուրոյի ինտերնետային կայքի հասցեն,

2) ընկերության՝ Հայաստանի Հանրապետության մարզերում գործող մասնաճյուղերի և (կամ) գործակալների ցանկը, որը պարունակում է այդ մասնաճյուղերի (գործակալների) գործունեության վայրի հասցեները, աշխատանքային ժամերը և կապի միջոցները, ինչպես նաև հայտարարություն այն մասին, որ այդ ցանկը վերջնական չէ ու կարող է փոփոխվել, և ավելի ճշգրիտ տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է անմիջապես դիմել ընկերությանը կամ այցելել ընկերության տնային էջ:»:

14) Կանոնակարգի 48-րդ կետի 13-րդ ենթակետի «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. գրավի բռնագանձման վերաբերյալ (օրինակ՝ «ՁԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԳՈՒՅՔԸ (տունը, մեքենան կամ այլ) ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:»:

15) Կանոնակարգի 51-րդ կետի 13-րդ ենթակետից հանել «ինչպես նաև հաշվի վրա արգելանք դնելու վերաբերյալ հաշվետիրոջը տեղեկացնելու կարգը» բառերը:

16) Կանոնակարգի 51-րդ կետի 14-րդ ենթակետից հանել «ինչպես նաև հաշվի վրա արգելանք դնելու վերաբերյալ հաշվետիրոջը տեղեկացնելու կարգը,» բառերը:

17) Կանոնակարգի 53-րդ կետի 2-րդ ենթակետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առանց բանկային հաշվի բացման ֆիզիկական անձանց կողմից իրականացվող դրամական (փողային) փոխանցումների ժամանակ. (բացառությամբ ՀՀ տարածքում պետական և տեղական բյուջե վճարումների, հանրային ծառայությունների համար (կոմունալ) վճարումների):»:

18) Կանոնակարգի 54-րդ կետը լրացնել 7-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«7) ԱՊՊԱ-ի գծով ներկայացվում է նաև հետևյալ տեղեկատվությունը.

ա. ԱՊՊԱ կտրոնի վերաբերյալ՝ դրա փակցնելու պահանջը և տեղը, ԱՊՊԱ կտրոնի կորստի, հափշտակման, վնասման կամ ոչնչացման դեպքում կիրառվող ընթացակարգերը, տեղեկացում ԱՊՊԱ կտրոնի օգտագործման կանոնների խախտման դեպքում կիրառվող պատժամիջոցների մասին,

բ.Համաձայնեցված հայտարարագրի վերաբերյալ՝ համաձայնեցված հայտարարագրի լրացման և այն ապահովագրական ընկերությանը ներկայացման ընթացակարգերը,

գ. ոչ ստանդարտ իրավիճակներում (օրինակ, երբ պատահարում ներգրավված են մի քանի տուժողներ և նրանց պատճառված վնասների ընդհանուր գումարը գերազանցում է սահմանված ապահովագրական գումարը) կիրառվող ապահովագրական հատուցումների հաշվարկման օրինակներ, բացատրություններ,

դ. Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին ապահովագրական հատուցումների վճարման դեպքերն ու կարգը,

ե. ապահովագրավճարների զեղչերի և հավելավճարների համակարգի (Բոնուս-Մալուս համակարգ) էությունը և կիրառման ժամկետները:»:

19) Կանոնակարգի Հավելված 1-ի աղյուսակը լրացնել նոր տողերով՝ հետևյալ բովանդակությամբ.

1	2	3	4
Արտարժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը			
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝ ԱՄՆ դոլարով Եվրոյով Ռուսական ռուբլով Այլ			

20) Կանոնակարգի Հավելված 2-ի աղյուսակը լրացնել նոր տողերով՝ հետևյալ բովանդակությամբ.

1	2	3	4	5
Արտարժութային դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը				
Ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և բանկի ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցությունը՝ ԱՄՆ դոլարով Եվրոյով Ռուսական ռուբլով Այլ				

21) Կանոնակարգի Հավելված 3-ի և Հավելված 4-ի աղյուսակներում

ա. «Նորմատիվներ» սյան երկրորդ տողում «վճարունակության պահանջվող սահմանաչափի» բառերը փոխարինել «կապիտալի համարժեքության» բառերով,

բ. «Նորմատիվներ» սյան ութերորդ տողում «առանձին վերցված ակտիվների համարժեքության» բառերը փոխարինել «տեխնիկական պահուստներին համարժեք բոլոր և առանձին վերցված ակտիվների» բառերով:

22) Կանոնակարգի Հավելված 3-ի և Հավելված 4-ի աղյուսակներին հաջորդող առաջին պարբերությունում «վճարունակության նորմատիվը» բառերը փոխարինել «կապիտալի համարժեքության նորմատիվը» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման 2-րդ կետի 3-րդ, 21-րդ և 22-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 սեպտեմբերի 2010 թ., N220-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի ««Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Ձև թիվ 19 (օրական) հաշվետվությունը լրացնում են արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնող վարկային կազմակերպությունները: Թիվ 19 հաշվետվության մեջ լրացվում են հաշվետու օրվան նախորդող օրվա ընթացքում, ինչպես նաև հաշվետու օրվան նախորդող օրվա ժամը 14:30-ից մինչև հաշվետու օրվա ժամը 14:30-ը իրականացված արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունները:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. սեպտեմբերի 22-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.10.2010 թ. (ՀՀԳՏ N23 (375), 15.10.2010):

Ֆայլի անվանումը պետք է ունենա թվային «թթթթթ19.xls » ֆորմատը, որտեղ թթթթթ-ն հաշվետվությունն ուղարկող վարկային կազմակերպության կոդն է, 19-ը՝ թիվ 19 հաշվետվության նույնացուցիչը:

Թիվ 19 (օրական) հաշվետվությունը կազմելիս պետք է հետևել աղյուսակում բերված կանոններին.

N°	Անվանում	Տեսք	Նշումներ
1	Վարկային կազմակերպության կոդը և անվանումը	5n և 50x1	Վարկային կազմակերպության կոդը մուտքագրվում է C6 հասցեում՝ իսկ անվանումը՝ D6
2	Ամսաթիվը	2n/2n/4n	Մուտքագրվում է C7 հասցեում
3	Գրառման համարը (N°)	2n	Մուտքագրվում է աղյուսակի A սյունակում՝ սկսած 11-րդ տողից
4	Գործարքի տեսակը	1n/1n/1n/1n	Մուտքագրվում է աղյուսակի B սյունակում՝ սկսած 11-րդ տողից
5	Գործարքի արժույթները (սակարկվող/գնաճշվող)	3a/3a	Մուտքագրվում է աղյուսակի C սյունակում՝ սկսած 11-րդ տողից
6	Առքի ծավալը (արտարժույթով)	թվային	Մուտքագրվում է աղյուսակի D սյունակում՝ սկսած 11-րդ տողից
7	Առքի միջին կշռված փոխարժեքը	թվային	Մուտքագրվում է աղյուսակի E սյունակում՝ սկսած 11-րդ տողից
8	Վաճառքի ծավալը (արտարժույթով)	թվային	Մուտքագրվում է աղյուսակի F սյունակում՝ սկսած 11-րդ տողից
9	Վաճառքի միջին կշռված փոխարժեքը	թվային	Մուտքագրվում է աղյուսակի G սյունակում՝ սկսած 11-րդ տողից

1 - Աղյուսակում ընդունված են հետևյալ նշանակումները.

x-տառաթվային, n-թվային, a-տառային, n-տվյալը պետք է պարտադիր ներկայացված լինի նշված քանակի նիշերով:

Ամսաթիվը պետք է լրացված լինի «օր/ամիս/տարի» տեսքով: Այն դեպքերում, երբ վարկային կազմակերպությունն աշխատել է հանգստյան օրերին, ապա այդ օրերին իրականացված գործառնությունների վերաբերյալ տվյալները գրանցվում են որպես հանգստյան կամ տոն օրվան նախորդող աշխատանքային օրվա ժ.14:30-ից հետո իրականացված գործարքներ:

«Գործարքի տեսակը» սյունակում լրացվում է գործարքի կոդը, որը բաղկացած է չորս պարամետրերից և ունի հետևյալ տեսքը՝ «1n/1n/1n/1n», որտեղ առաջին պարամետրը ցուցադրում է, թե ում միջև է կատարվել գործարքը, և այն կարող է ունենալ հետևյալ արժեքները.

«1» - գործառնություններ ռեզիդենտ վարկային կազմակերպությունների միջև,

«3» - գործառնություններ վարկային կազմակերպությունների տարածքում, ինչպես նաև գործառնություններ ոչ ռեզիդենտ վարկային կազմակերպության հետ:

Երկրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի տեսակը և կարող է ունենալ հետևյալ արժեքները.

«1» - SPOT տեսակի գործառնություններ,

«2» - SWAP տեսակի գործառնություններ (արժութային սվոփ, ֆորվարդ, ֆյուչերս, օպցիոն):

Երրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի մասնակցի տեսակը.

«1» - ռեզիդենտների համար,

«2» - ոչ ռեզիդենտների համար:

Չորրորդ պարամետրը ցույց է տալիս գործարքի իրականացման ժամկետը.

«1» - նախորդ օրվա ժամը 14:30-ից մինչև տվյալ օրվա ժամը 14:30-ը,

«2» - նախորդ օրվա ընթացքում իրականացված:

Օրինակ՝ 3/2/1/2՝ ռեզիդենտների հետ իրականացված վարկային կազմակերպության տարածքում կնքված SWAP տիպի գործարք՝ իրականացված նախորդ օրվա ընթացքում:

«3/1/1/1» կոդի տակ պետք է ներկայացնել նաև ներքին արժութային շուկայում բաժնետոմսերի միջոցով իրականացված փոխարկումների ծավալները:

«Գործարքի արժույթներ» սյունակը պետք է լրացվի տարադրամների ISO կոդերի տեսքով, անգլերեն տառերով՝ օգտագործելով «/» նշանը որպես բաժանիչ առանց չակերտների, օրինակ՝ USD/AMD, ընդ որում՝ համարիչում գրվում է սակարկվող արժույթի նշանը, հայտարարում՝ գնաճշվող:

«Առքի ծավալ» և «Վաճառքի ծավալ» սյունակներում լրացվում են համապատասխանաբար գնվող և վաճառվող (սակարկվող) արժույթների ծավալները:

«Առքի միջին կշռված փոխարժեք» և «Վաճառքի միջին կշռված փոխարժեք» սյունակներում համապատասխանաբար լրացվում են տվյալ տիպի գործարքի միջին կշռված փոխարժեքները՝ յուրաքանչյուր արտարժույթի տեսակի գծով, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ՄՓառք= (ԱԾ1*ԱՓ1+ԱԾ2*ԱՓ2+...+ԱԾn*ԱՓn) / (ԱԾ1+ԱԾ2+...+ԱԾn),

ՄՓվաճառք= (ՎԾ1*ՎՓ1+ՎԾ2*ՎՓ2+...+ՎԾn*ՎՓn) / (ՎԾ1+ՎԾ2+...+ՎԾn),

որտեղ՝

ՄՓառք (ՄՓվաճառք) - առքի (վաճառքի) միջին փոխարժեք,

ԱՇi (ՎՇi) - «i »-րդ գործարքի առքի (վաճառքի) ծավալ,

ԱՓi (ՎՓi) - «i»-րդ գործարքի առքի (վաճառքի) փոխարժեք,

«i» - փոփոխական թիվ, որը փոխվում է 1-ից «n»:

Սույն հաշվարկը կատարվում է արտարժույթի յուրաքանչյուր տեսակի համար, որով գործարք է կատարվել:

Փոխարժեքները պետք է ներկայացվեն սակարկվող արժույթի ուղիղ գնանշման տեսքով, այսինքն՝ ցույց տան արտարժույթի փոխարժեքը 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, բացառությամբ՝ անգլիական ֆունտ ստեռլինգի և եվրոյի փոխարժեքների:

Մուտքագրվող տեղեկությունները չպետք է ընդհատվեն և պարունակեն դատարկ տողեր կամ 0:

Սփոթ տիպի գործարքները հաշվետվության մեջ գրանցվում են գործարքի կնքման օրը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 սեպտեմբերի 2010 թ., N241-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 70-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «իգ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պարբերականների թողարկման և հրապարակման կարգն ու պայմանները» թիվ 70-Ն որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն» որը ներառում է.

ա. Ուղերձի խոսք

բ. Կառավարում և հաշվետվողականություն

գ. Ռազմավարական ուղղությունների ամփոփում

դ. Դրամավարկային քաղաքականություն

ե. Ֆինանսական կայունություն, կարգավորում և վերահսկողություն

զ. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար

է. Կառավարում և կազմակերպչական զարգացում

ը. Հասարակայնության հետ կապեր

թ. Ռիսկի կառավարում և աուդիտ

ժ. Տարեկան ֆինանսական հաշվետվություններ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
29 սեպտեմբերի 2010 թ., N247-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. սեպտեմբերի 28-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 21.10.2010 թ. (ՀՀՊՏ N25 (377), 1.11.2010):

«Համահայկական բանկի լիցենզավորումը, Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելը և ներկայացվող փաստաթղթերը, Համահայկական բանկի ղեկավարների (բացառությամբ խորհրդի անդամների, նախագահի ու տարածքային ստորաբաժանումների ղեկավարների) որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 01/02-ը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Համահայկական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 11-րդ և 13-րդ հոդվածները, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է .

1. Հաստատել «Համահայկական բանկի լիցենզավորումը, Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելը և ներկայացվող փաստաթղթերը, Համահայկական բանկի ղեկավարների (բացառությամբ խորհրդի անդամների, նախագահի ու տարածքային ստորաբաժանումների ղեկավարների) որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 01/02-ը՝ համաձայն Հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
22 հոկտեմբերի 2010 թ., N263-Ն

Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 263-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 01/02

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ,ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ) ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ և սահմանումներ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Համահայկական բանկի լիցենզավորման, ղեկավարների (բացառությամբ խորհրդի անդամների, նախագահի ու տարածքային ստորաբաժանումների ղեկավարների) որակավորման և գրանցման կարգը և պայմանները, ինչպես նաև Համահայկական բանկի լիցենզավորման հետ կապված այլ հարաբերություններ:

2. Սույն կանոնակարգի իմաստով Համահայկական բանկի ղեկավարներ են համարվում բանկի խորհրդի նախագահը, անդամները, գործադիր տնօրենը (վարչության նախագահը), նրա տեղակալները, բանկի տնօրինության (վարչության) անդամները, գլխավոր հաշվապահը, նրա տեղակալը, ներքին

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. հոկտեմբերի 22-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.10.2010 թ. (ՀՀՊՏ N26 (378), 1.11.2010):

աուդիտի ղեկավարը և անդամները, Համահայկական բանկի տարածքային ստորաբաժանումների ղեկավարները (մասնաճյուղի կառավարիչը և գլխավոր հաշվապահը):

1) Սույն կարգում օգտագործվող ուղղակի և անուղղակի նշանակալից մասնակից, փոխկապակցվածություն տերմինները համապատասխանում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի սահմանումներին:

2) Ուղղակի մասնակցություն է համարվում իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում մասնակիցն ունի տվյալ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող կամ չտվող բաժնետոմս, իսկ անուղղակի մասնակցություն է համարվում իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում այնպիսի մասնակցությունը, որի դեպքում՝

ա. մասնակիցը չունի իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (բաժնետոմս), սակայն Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով հիմնավորված այդ մասնակցությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն իր գործարար համբավով կամ հեղինակությամբ հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները.

բ. մասնակիցը չունի իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (բաժնետոմս), սակայն հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները՝ տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իր ունեցած պահանջի իրավունքի ուժով.

գ. մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում ուղղակի մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում ունի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50 տոկոս և ավելի մասնակցություն.

դ. մասնակիցն իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում ուղղակի մասնակցություն ունեցող իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում ունի կամ չունի մասնակցություն և Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած չափանիշներով իր գործարար համբավով կամ հեղինակությամբ հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները:

Գլուխ 2. Համահայկական բանկի լիցենզավորումը

3. Համահայկական բանկի լիցենզավորման համար Համահայկական բանկը ներկայացնում է.

1) դիմում՝ համաձայն ենթահավելված 1-ի,

2) Համահայկական բանկի ղեկավարների ցուցակը, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի պատշաճ վավերացված ստորագրության նմուշները,

3) Համահայկական բանկի ղեկավարների (բացառությամբ Համահայկական բանկի խորհրդի անդամների, նախագահի) գործունեության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն ենթահավելված 2-ի, խորհրդի անդամների, նախագահի, տարածքային ստորաբաժանումների ղեկավարների գործունեության վերաբերյալ տեղեկանք՝ համաձայն ենթահավելված 3-ի,

4) Համահայկական բանկի առաջիկա երեք տարիների գործունեության տնտեսական ծրագիրը՝ համաձայն ենթահավելված 4-ի:

4. Դիմումը ստանալուց հետո իննսունօրյա ժամկետում Կենտրոնական բանկը լիցենզավորում է Համահայկական բանկին, եթե այն ներկայացրել է սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև՝ եթե այն բավարարում է հետևյալ պայմաններին.

1) Կենտրոնական բանկում բացված կանոնադրական կապիտալի համալրման համապատասխան կուտակային հաշվում առկա է առնվազն հինգ միլիարդ դրամի չափով միջոցներ,

2) ստեղծվել է Համահայկական բանկի ներքին կազմակերպական կառուցվածքը,

3) Համահայկական բանկի ղեկավարները (բացառությամբ խորհրդի նախագահի, անդամների, տարածքային ստորաբաժանումների ղեկավարների) բավարարում են սույն կանոնակարգի 5-րդ գլխով սահմանված որակավորման և մասնագիտական համապատասխանության պահանջներին,

4) Համահայկական բանկի տարածքը և նրա տեխնիկական հագեցվածությունը համապատասխանում են սույն կանոնակարգի 7-րդ գլխով սահմանված պահանջներին:

5. Համահայկական բանկի լիցենզավորման մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշում ընդունելուց հետո, հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Կենտրոնական բանկը Համահայկական բանկին տալիս է լիցենզիա՝ համաձայն ենթահավելված 5-ի:

6. Կենտրոնական բանկը Համահայկական բանկին լիցենզիան տրամադրելիս ծանուցում է, որ բանկային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ցանկը գտնվում է Կենտրոնական բանկի պաշտոնական ինտերնետային կայքում:

7. Լիցենզիայի կորստի կամ ոչնչացման դեպքում Համահայկական բանկը Կենտրոնական բանկ դիմում է ներկայացնում լիցենզիայի կրկնօրինակը ստանալու համար:

8. Կենտրոնական բանկը կորած կամ ոչնչացած լիցենզիայի կրկնօրինակը Համահայկական բանկին տալիս է՝ համապատասխան դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում:

9. Կորած լիցենզիան գտնելու դեպքում Համահայկական բանկը գտնված լիցենզիայի օրինակը վերադարձնում է Կենտրոնական բանկ:

10. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր: Ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն Համահայկական բանկի իրավասու անձի կողմից, ընդ որում, պատճենները ներկայացվում են «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

11. Համահայկական բանկի լիցենզավորման դիմումի քննության իննսունօրյա ժամկետը կարող է կասեցվել իննսուն օրով:

Գլուխ 3. Համահայկական բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը

12. Համահայկական բանկը Հայաստանի Հանրապետության տարածքում և տարածքից դուրս կարող է հիմնադրել մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

13. Համահայկական բանկի Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծվող մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գրանցվում են Կենտրոնական բանկի կողմից:

14. Համահայկական բանկը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելիս ստանում է Կենտրոնական բանկի համաձայնությունը:

15. Համահայկական բանկը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս մասնաճյուղեր ստեղծելիս համապատասխան երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով այլ երկրում գրանցվելուց (լիցենզավորվելուց, արտոնագրվելուց) հետո հաշվառվում են Կենտրոնական բանկում՝ տասը օրվա ընթացքում, ներկայացնելով գրանցման (լիցենզավորման, արտոնագրման) փաստը վկայող փաստաթուղթ:

Գլուխ 4. Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելը և ներկայացվող փաստաթղթերը

16. Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում որևէ մասնակցություն ակնկալող սուբյեկտները (բացառությամբ Կենտրոնական բանկի կամ Հայաստանի Հանրապետության) պարտավոր են մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար, դիմել Կենտրոնական բանկ:

17. Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ակնկալող իրավաբանական անձ-ուղղակի մասնակիցը պարտավոր է մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար, դիմել Կենտրոնական բանկ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) իրավաբանական անձի կողմից Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում ուղղակի մասնակցություն ձեռք բերելու համար իրավաբանական անձի միջնորդագիրը,

2) Համահայկական բանկի միջնորդությունը իրավաբանական անձի կողմից Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերող անձանց համաձայնություն տալու համար՝ կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված բանկի կնիքով (կնիքի առկայության դեպքում),

3) Համահայկական բանկի իրավասու մարմնի (խորհուրդ կամ տնօրեն) գրավոր հավաստիացումը, որ ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են,

4) կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի իրավասու մարմնի որոշումը,

5) կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի կանոնադրությունը՝ կատարված փոփոխություններով,

6) հայտարարություն այն մասին, որ իր միջոցով որևէ այլ անձ Համահայկական բանկում անուղղակի մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում՝ համաձայն ենթահավելված 3-2-ի, հակառակ դեպքում՝ իր միջոցով անուղղակի մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն գլխում սահմանված փաստաթղթերը,

7) տեղեկանք՝ բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի վերաբերյալ՝ համաձայն ենթահավելված 6-ի,

8) իրավաբանական անձի՝ վերջին երեք տարիների և վերջին միջանկյալ՝

ա. հաշվապահական հաշվեկշիռը,

բ. ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը,

գ. դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը,

դ. սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,

ե. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները (երեք տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկատվությունը ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար),

9) վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող անկախ աուդիտորական եզրակացությունը,

10) Եթե սույն կետի 8-րդ ենթակետով սահմանված ֆինանսական հաշվետվությունները կազմված են օտարերկրյա պետության ազգային ստանդարտների համաձայն, ապա Կենտրոնական բանկ պետք է ներկայացվի.

ա. տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության հայտարարությունն այն մասին, որ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին, կամ

բ. հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջի, որտեղ կնշվի, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին,

11) տեղեկանք իրավասու մարմնի կողմից պետական բյուջեի և սոցիալական ապահովության պետական ծառայության նկատմամբ պարտքերի կամ դրանց բացակայության վերաբերյալ (ռեզիդենտների համար),

12) ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն),

13) հայտարարագիր «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմքերի բացակայության մասին՝ համաձայն ենթահավելված 5-2-ի,

14) եթե իրավաբանական անձ-ուղղակի մասնակիցն ընդգրկված է որևէ խմբի, հոլդինգի, միության կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա Կենտրոնական բանկ պետք է ներկայացվի նաև խմբի, հոլդինգի, միության կառուցվածքը,

15) եթե իրավաբանական անձ-ուղղակի մասնակիցն ընդգրկված է որևէ խմբի, հոլդինգի, միության կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա ներկայացվում են տվյալ խմբի, հոլդինգի, միության վերջին ֆինանսական տարվա՝

ա. հաշվապահական հաշվեկշիռը,

բ. ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը,

գ. դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը,

դ. սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,

ե. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար),

16) խմբի, հոլդինգի, միության վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող անկախ աուդիտորական եզրակացությունը:

17) Եթե սույն կետի 15-րդ ենթակետով սահմանված ֆինանսական հաշվետվությունները կազմված են օտարերկրյա պետության ազգային ստանդարտների համաձայն, ապա Կենտրոնական բանկ պետք է

ներկայացվի տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության հայտարարությունն այն մասին, որ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին, կամ հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջի, որտեղ կնշվի, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին:

18) Եթե սույն կետի 8), 9), 14), 15) և 16) ենթակետերով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են իրավաբանական անձի կամ խմբի/հոլդինգի/միության ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկին ներկայացվում է համապատասխան կայքի (տնային էջի) հասցեն:

19) Եթե իրավաբանական անձի գտնվելու (գրանցման) վայրի պետության օրենսդրությամբ չի նախատեսվում վերը նշված հաշվետվությունների կազմումը և իրավաբանական անձը նման հաշվետվություններ չի կազմել, ապա պետք է ներկայացվի.

ա. տվյալ իրավաբանական անձի հայտարարությունը ներկայացման ենթակա հաշվետվությունների չկազմման մասին, ինչպես նաև իրավական հիմքերը, որոնք լիարժեք և միանշանակ կհիմնավորեն այդ փաստը,

բ. նույն ժամանակահատվածի ֆինանսական վիճակը բնութագրող տեղեկությունները և/կամ տվյալները (մասնավորապես, իրավաբանական անձի մասնակիցների, դիտորդ խորհրդի, գործադիր մարմնի կամ կառավարման որևէ այլ մարմնի համար կազմված հաշվետվություններ կամ նման փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել և գնահատել իրավաբանական անձի ֆինանսական վիճակը):

18. Եթե Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք է բերվելու միջազգային կազմակերպությունների կողմից, ապա վերջիններիս կողմից Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգի 17-րդ կետի 8), 9) ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությամբ սույն կետը կարող է տարածվել նաև միջազգային համբավ (ճանաչում) և Ստանդարտ և Փուրզ կամ Մուդիզ վարկանիշային գործակալությունների կողմից սահմանված «Ա-» կամ «Ա3» և բարձր վարկանիշ ունեցող կազմակերպությունների վրա:

19. Եթե Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցությունը ձեռք է բերում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 17-րդ կետի 1), 2), 3), 4), 6), 11), 14) և 15) ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

20. Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ակնկալող ֆիզիկական անձ-ուղղակի մասնակիցը պարտավոր է մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար, դիմել Կենտրոնական բանկ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) ֆիզիկական անձի կողմից Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելու համար դիմում,

2) Համահայկական բանկի միջնորդությունը՝ անձի կողմից բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերող անձանց համաձայնություն տալու վերաբերյալ՝ կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված բանկի կնիքով,

3) Համահայկական բանկի իրավասու մարմնի (խորհուրդ կամ տնօրեն) գրավոր հավաստիացումը, որ ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են,

4) տեղեկանք Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերող ֆիզիկական անձի վերաբերյալ՝ համաձայն ենթահավելված 7-ի,

5) ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն),

6) հայտարարագիր՝ չմարված և չներված պարտավորությունների մասին,

7) հայտարարագիր «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմքերի բացակայության մասին՝ համաձայն ենթահավելված 5-1-ի,

8) հայտարարություն այն մասին, որ իր միջոցով որևէ այլ անձ Համահայկական բանկում անուղղակի մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում՝ համաձայն ենթահավելված 3-1-ի, հակառակ դեպքում՝ իր միջոցով անուղղակի մասնակցություն ձեռք բերող անձի վերաբերյալ սույն գլխում սահմանված փաստաթղթերը:

21. Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ակնկալող պետությունը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության) պարտավոր է մինչև տվյալ մասնակցությունը ձեռք բերելը, նախնական համաձայնություն ստանալու համար դիմել Կենտրոնական բանկ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) պետության անունից հանդես գալու իրավունք ունեցող մարմնից դիմում բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելու համար,

2) կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերող պետության իրավասու մարմնի որոշումը,

3) Համահայկական բանկի միջնորդությունը՝ անձի կողմից բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերող անձանց համաձայնություն տալու վերաբերյալ՝ կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրությամբ՝ վավերացված բանկի կնիքով,

4) Համահայկական բանկի իրավասու մարմնի (խորհրդի կամ նախագահի կամ տնօրենի (կանոնադրությամբ նախատեսված դեպքերում) գրավոր հավաստիացումը, որ ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասը (բաժնետոմսը) գնելու նախապատվության իրավունքի կիրառման՝ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված կանոնները պահպանված են,

22. Եթե մասնակցությունը ձեռք են բերում միմյանց հետ փոխկապակցված անձինք կամ Համահայկական բանկի մասնակցի, խորհրդի նախագահի, անդամների, տնօրենի կամ տնօրինության անդամի հետ փոխկապակցված անձինք, ապա սույն գլխում սահմանված փաստաթղթերը պահանջվում են նրանցից յուրաքանչյուրից:

1) Համահայկական բանկում անուղղակի մասնակցություն ակնկալող անձի վերաբերյալ Կենտրոնական բանկ պետք է ներկայացվեն իրավաբանական անձանց համար՝ կանոնակարգի 17-րդ կետի 5), 7), 8), 9), 11), 13) ենթակետերով, իսկ ֆիզիկական անձանց համար՝ կանոնակարգի 20-րդ կետի 4), 6), 7) ենթակետերով սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև սույն կանոնակարգի 27-րդ կետի 5) ենթակետով սահմանված տեղեկանքը և հայտարարագիր՝ համաձայն ենթահավելված 7-1-ի և 7-2-ի:

23. Եթե անուղղակի մասնակցությունը ձեռք է բերվում ուղղակի մասնակցի միջոցով, ապա սույն կանոնակարգով նախատեսված վերոնշյալ փաստաթղթերը Կենտրոնական բանկ է ներկայացնում ուղղակի մասնակիցը, այլ դեպքերում՝ Համահայկական բանկը:

24. Եթե Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում անուղղակի մասնակցություն ձեռք է բերում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 17-րդ կետի 11) և 13) ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

25. Եթե բանկի կանոնադրական հիմնադրամում անուղղակի մասնակցությունը ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպությունը, ապա վերջինս Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 17-րդ կետի 7), 11) և 13) ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

26. Եթե Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում անուղղակի մասնակիցը և Համահայկական բանկում ուղղակի մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձը ընդգրկված են որևէ խմբի/հոլդինգի/միության կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա անուղղակի մասնակիցը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի սույն կանոնակարգի 17-րդ կետի 5), 7), 10) և 12) ենթակետերով պահանջվող փաստաթղթերը:

27. Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ակնկալող ֆիզիկական և իրավաբանական անձինք Կենտրոնական բանկ պետք է ներկայացնեն նաև.

1) մասնակցություն ձեռք բերող անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց (այդ թվում՝ այն իրավաբանական անձանց, որոնցում Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերող անձը հանդիսանում է նշանակալից մասնակից) վերջին մեկ տարվա՝

ա. հաշվապահական հաշվեկշիռը,

բ. ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը,

գ. դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը,

դ. սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,

ե. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները (մեկ տարուց պակաս գործունեություն իրականացրած իրավաբանական անձինք նշված տեղեկությունները ներկայացնում են իրականացրած գործունեության ողջ ժամկետի համար).

2) մասնակցություն ձեռք բերող անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերջին տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը հաստատող անկախ աուդիտորական եզրակացությունը:

3) Եթե սույն կետի 1) ենթակետում սահմանված ֆինանսական հաշվետվությունները կազմված են օտարերկրյա պետության ազգային ստանդարտների համաձայն, ապա Կենտրոնական բանկ պետք է ներկայացվի.

ա. տվյալ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները հաստատող անկախ աուդիտորական կազմակերպության հայտարարություն այն մասին, որ ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին, կամ

բ. հղում այդ պետության որևէ պաշտոնական ինտերնետային էջի, որտեղ կնշվի, որ տվյալ պետության հաշվապահական հաշվառման ստանդարտները համապատասխանում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին կամ միջազգայնորեն ճանաչված այլ ստանդարտներին:

4) Եթե սույն կետի 1) և 2) ենթակետերով սահմանված հաշվետվությունները (տեղեկությունները) տեղակայված են խմբի/հոլդինգի/միության ինտերնետային կայքում, ապա Կենտրոնական բանկին ներկայացվում է համապատասխան կայքի/տնային էջի հասցեն:

Եթե իրավաբանական անձի գտնվելու (գրանցման) վայրի պետության օրենսդրությամբ չի նախատեսվում վերը նշված հաշվետվությունների կազմումը և իրավաբանական անձը նման հաշվետվություններ չի կազմել, ապա պետք է ներկայացվի.

ա. տվյալ իրավաբանական անձի հայտարարությունը ներկայացման ենթակա հաշվետվությունների չկազմման մասին, ինչպես նաև իրավական հիմքերը, որոնք լիարժեք և միանշանակ կհիմնավորեն այդ փաստը,

բ. նույն ժամանակահատվածի ֆինանսական վիճակը բնութագրող տեղեկությունները և/կամ տվյալները (մասնավորապես, իրավաբանական անձի մասնակիցների, դիտորդ խորհրդի, գործադիր մարմնի կամ կառավարման որևէ այլ մարմնի համար կազմված հաշվետվություններ կամ նման փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել և գնահատել իրավաբանական անձի ֆինանսական վիճակը):

5) տեղեկանք մասնակցություն ձեռք բերող անձի հետ փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձանց (այդ թվում՝ այն իրավաբանական անձանց, որոնցում Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերող անձը նշանակալից մասնակից է) մասին՝ համաձայն ենթահավելվածի 8-1-ի և 8-2-ի:

6) Եթե սույն կետում նշված տեղեկատվությունը վերաբերում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Ա» և «Բ» վարկանիշ ստացած կազմակերպություններին կամ բանկում մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձանց հետ միևնույն խմբի/հոլդինգի/միության կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում ընդգրկված կազմակերպություններին, ապա չի պահանջվում ներկայացնել այդ տեղեկատվությունը:

7) Եթե բանկի կանոնադրական կապիտալում ուղղակի մասնակցություն ձեռք բերելու մտադրություն ունեցող անձի միջոցով Համահայկական բանկի կանոնադրական կապիտալում անուղղակի մասնակցություն ձեռք են բերում մի քանի անձիք, ապա անուղղակի մասնակցություն ձեռք բերելու համաձայնություն ստանալու համար կարող են ներկայացվել «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով պահանջվող փաստաթղթերը միայն այն ֆիզիկական անձի վերաբերյալ, որի միջոցով որևէ այլ անձ Համահայկական բանկում մասնակցություն ձեռք չի բերում: Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել փաստաթղթեր նաև այն անձանցից, որոնց միջոցով Համահայկական բանկում մասնակցություն է ձեռք բերվում:

28. Մասնակցության նախնական համաձայնության վերաբերյալ դիմումը Կենտրոնական բանկը քննում է և որոշում է կայացնում 30 օրյա ժամկետում: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով երեսունօրյա ժամկետը կարող է Կենտրոնական բանկի որոշմամբ կասեցվել 90 օրով:

29. Կենտրոնական բանկը մերժում է բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելու դիմումը համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 2-րդ մասի, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի:

30. Ուղղակի մասնակցի միջոցով ձեռք բերվող անուղղակի մասնակցությունը բանկի կանոնադրական հիմնադրամում համարվում է մերժված, եթե մերժվել է ուղղակի մասնակցության միջնորդագիրը:

31. Մասնակցության ձեռք բերման գործարքի (կամ գործարքների) իրականացումը հաստատող հիմքերը (փաստաթղթերը) պետք է ներկայացվեն կենտրոնական բանկ: Եթե որոշմամբ սահմանված ժամկետում գործարքը (կամ գործարքները) չի իրականացվում, կամ գործարքի (կամ գործարքների) իրականացումը հաստատող հիմքերը (փաստաթղթերը) չեն ներկայացվում Կենտրոնական բանկ, ապա Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ուժը կորցրած է համարվում:

Գլուխ 5. Համահայկական բանկի ղեկավարների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումը, ղեկավարների գրանցումը, խորհրդի նախագահի, անդամների, տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվառումը

32. Համահայկական բանկի ղեկավար պաշտոններում աշխատելու համար թեկնածուները պետք է անցնեն որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգում և գրանցվեն Կենտրոնական բանկում՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի դրույթներին համապատասխան՝ բացառությամբ Համահայկական բանկի խորհրդի նախագահի, անդամների, տարածքային ստորաբաժանումների ղեկավարների:

33. Համահայկական բանկի տնօրենը (վարչության նախագահը) և տեղակալները (տնօրինության անդամները, բացառությամբ գլխավոր հաշվապահի) որակավորման և մասնագիտական համապատասխանության գրավոր քննություն չեն հանձնում:

34. Համահայկական բանկի խորհրդի նախագահը, անդամները, տարածքային ստորաբաժանումների ղեկավարները հաշվառվում են Կենտրոնական բանկում՝ ենթահավելված 3-ով նախատեսված տեղեկությունների հիման վրա:

Գլուխ 6. Փոփոխությունների գրանցումը

35. Համահայկական բանկը պարտավոր է Կենտրոնական բանկ գրանցման ներկայացնել հետևյալ փոփոխությունները.

ա. Համահայկական բանկի կանոնադրություններում կատարված փոփոխությունները,

բ. ղեկավարների կազմում կատարված փոփոխությունները:

36. Բանկի ղեկավարների (բացառությամբ խորհրդի նախագահի, անդամների, տարածքային ստորաբաժանումների ղեկավարների) կազմում կատարված փոփոխությունները Կենտրոնական բանկում գրանցվում են սույն կարգի 5-րդ գլխով սահմանված կարգով:

37. Համահայկական բանկի կանոնադրությունում կատարված փոփոխությունները գրանցելու նպատակով ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ Համահայկական բանկի կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ՝ վավերացված բանկի կնիքով (առկայության դեպքում),

2) Համահայկական բանկի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ բանկի կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,

3) Համահայկական բանկի փոփոխված կանոնադրությունը (3 օրինակից): Եթե կատարված փոփոխությունները վերաբերում են Համահայկական բանկի այն ներքին իրավական ակտերին, որոնց հղում է կատարված կանոնադրության մեջ, ապա կից պետք է ներկայացվեն նաև համապատասխան իրավական ակտերը: Կանոնադրության թերթերը պետք է լինեն համարակալված և թելակարված. ընդ որում, կանոնադրության վերջին թերթի հետնամասում, կարի վրա պետք է փակցված լինի պիտակ՝ համաձայն ենթահավելված 9-ի:

38. Կենտրոնական բանկը պարտավոր է փոփոխությունների գրանցման համար սույն գլխով սահմանված փաստաթղթերը ստանալու պահից՝ Կենտրոնական բանկի իրավասու մարմնի որոշմամբ՝ երեսնօրյա ժամկետում գրանցել փոփոխությունները կամ մերժել գրանցումը:

39. Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով երեսնօրյա ժամկետը կարող է կասեցվել հինսուն օրով: Անհրաժեշտ տեղեկությունների ստացումից հետո միջնորդագրի քննության ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և երեսնօրյա ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

40. Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացման դեպքում փոփոխված կանոնադրության գրանցման համար Համահայկական բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում բաժնետոմսերի վերջին թողարկման ազդագրի գրանցման վերաբերյալ որոշման պատճենը, ինչպես նաև հետևյալ փաստաթղթերը.

1) կատարված փոփոխությունները գրանցելու մասին միջնորդագիր՝ Համահայկական բանկի կառավարման մարմնի լիազոր անձի ստորագրությամբ՝ վավերացված բանկի կնիքով (կնիքի առկայության դեպքում),

2) Համահայկական բանկի իրավասու մարմնի որոշումը կամ արձանագրությունից քաղվածք՝ կանոնադրությունում կատարված փոփոխությունների վերաբերյալ,

3) Համահայկական բանկի փոփոխված կանոնադրությունը (3 օրինակից): Եթե կատարված փոփոխությունները վերաբերում են Համահայկական բանկի այն ներքին իրավական ակտերին, որոնց հղում է կատարված կանոնադրության մեջ, ապա կից պետք է ներկայացվեն նաև համապատասխան իրավական ակտերը:

41. Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացման դեպքում մինչև փոփոխված կանոնադրության գրանցումը, Համահայկական բանկը կանոնադրական հիմնադրամը համալրելու նպատակով Կենտրոնական բանկում բացում է կուտակման հաշիվ և Կենտրոնական բանկ ներկայացնում կանոնադրական հիմնադրամի համալրմանն առնչվող բոլոր փաստաթղթերի պատճենները:

Գլուխ 7. Համահայկական բանկի տարածքի և տեխնիկական հագեցվածության նկատմամբ պահանջները

42. Համահայկական բանկը և Համահայկական բանկի տարածքային ստորաբաժանումները պետք է ունենան.

1) բանկին սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալությամբ կամ անհատույց օգտագործման իրավունքով վերցված առանձնացված տարածք.

2) կանխիկ դրամով և այլ արժեքներով գործառնություններ կատարելու, հաճախորդների դրամարկղային սպասարկումն իրականացնելու, կանխիկ դրամի ու այլ արժեքների հուսալի պահպանության համար դրամարկղային հանգույց՝ դրամապահոց և գործառնական դրամարկղ: Դրամապահոցը կանխիկ դրամի և այլ արժեքների, գրավադրված և ի պահ ընդունված արժեքների պահպանության հիմնական դրամապահոց է՝ իր նախադրամապահոցով: Դրամապահոցի բացակայության դեպքում անհրաժեշտ է ինկասացիոն ծառայության հետ կնքված պայմանագիր՝ նշված միջոցների ամենօրյա տեղափոխման, հանձնման համար, ինչպես նաև որևէ բանկի հետ կնքված պայմանագիր, եթե նշված միջոցները պահպանման են հանձնվելու այլ բանկ կամ այլ բանկի տարածքային ստորաբաժանում: Դրամապահոցի բացակայության պարագայում Համահայկական բանկը կարող է չիրականացնել դրամարկղում առկա կանխիկ դրամի ինկասացում, եթե դրամարկղում կանխիկ դրամի՝ տվյալ օրվա մնացորդը չի գերազանցում 5 միլիոն ՀՀ դրամը, և տեղադրված է հատուկ չհրկիզվող պահարան, որն ամրացված է դրամարկղի հատակին ու պատին:

Եթե Համահայկական բանկի կանոնադրությամբ նախատեսված է, որ վերջինս «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ ձևով, ապա դրամարկղային հանգույցի առկայությունը պարտադիր չէ:

3) Շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման և շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգեր: Ընդ որում, շուրջօրյա պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը պետք է միացված լինի համապատասխան կազմակերպությանը, իսկ շուրջօրյա անվտանգության ահազանգման համակարգը պետք է միացված լինի ոստիկանության կամ արտոնագրված պահակախմբի հետ՝ հիմնավորված համապատասխան փաստաթղթերով:

43. Համահայկական բանկը և բանկի տարածքային ստորաբաժանումը պետք է միացված լինեն միմյանց կապող համակարգչային ցանցի հետ:

44. Համահայկական բանկը կարող է սույն կանոնակարգի 42-րդ կետով սահմանված տեխնիկական հագեցվածության պահանջների փոխարեն, բացառությամբ 1-ին կետի, ունենալ «Բանկերս Բլանկետ Բոնդ (BBB)» ապահովագրության պայմանագիր հետևյալ ռիսկերի գծով.

1) ավազակության, գողության, կողոպուտի, յուրացման, վատնման, խարդախության, այդ թվում՝ կեղծ փողեր, արժեթղթեր և վճարային փաստաթղթեր իրացնելու կամ կեղծ պայմանագրեր ներկայացնելու հետևանքով ընկերության գույքի հափշտակության ռիսկը,

2) բանկի գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը, այդ թվում բանկի տարածքում գտնվող կամ փոխադրվող կանխիկ դրամի, արժեթղթերի, վճարային փաստաթղթերի և այլ արժեքավոր գույքի կորստի կամ վնասվածքի ռիսկը:

45. Նշված ռիսկերի գծով ապահովագրության պայմանագրում ապահովագրական գումարը չի կարող փոքր լինել բանկի ակտիվների 1 տոկոսից: Ընդ որում, «Բանկերս Բլանկետ Բոնդ (BBB)» ապահովագրություն իրականացնող ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը պետք է ունենա ստորև նշված միջազգային վարկանշող կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված վարկանիշ, որը պետք է ցածր չլինի՝

- Ստանդարտ և Փուրզի «ԲԲԲ» խմբի՝ ԲԲԲ-
- Մուդիզի «Բաա» խմբի՝ Բաա3
- Ա. Մ. Բեստի «Բ» խմբի՝ Բ+
- Դաֆֆ և Ֆելփզի «ԲԲԲ» խմբի՝ ԲԲԲ-
- Վեիսսի «Բ» խմբի՝ Բ-
- Ֆիթչի «ԲԲԲ» խմբի՝ ԲԲԲ-:

Հավելված 1-ի

Ենթահավելված 1

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 263-Ն որոշմամբ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

Դ Ի Մ Ո Ւ Մ

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահի
պարոն .....

Հարգելի պարոն_____

Ես (մենք)՝ _____ գործելով որպես «Համահայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերության լիազոր ներկայացուցիչ (ներ) _____ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք Համահայկական բանկի լիցենզավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը (ցանկը և փաստաթղթերը _____ էջ):

Ես (մենք) հավաստիացնում եմ(ենք), որ մանրակրկիտ դիտարկել եմ (ենք) սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում եմ(ենք), որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում եմ(ենք), որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Խնդրում եմ(ենք) Համահայկական բանկին տրամադրել բանկային գործունեության լիցենզիա:

Համահայկական բանկի հիմնադիրների կողմից լիազորված անձ (անձինք)՝

Ստորագրություն	Անուն, ազգանուն	Անձնագրի սերիան, ում կողմից և երբ է տրված, առկայության դեպքում նաև սոցիալական քարտի համարը
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____

_____ _____ 20 թ.

Հավելված 1-ի
Ենթահավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 263-Ն որոշմամբ

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Ղեկավարների (որակավորվող անձի) վերաբերյալ տեղեկություններ

Ամրակցեք այստեղ Ձեր լուսանկարը:
☐ **Այս վանդակում նշում է կատարվում, եթե միջնորդագրում ներկայացվում են միայն փոփոխությունները**
1. Անձնական տվյալներ
1.1 Անուն, ազգանուն, հայրանուն
1.2 Սեռ՝ o արական o իգական
1.3 Ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
1.4 Ծննդավայր
1.5 Քաղաքացիություն
1.6 Անձնագրի համար և սերիա, ում կողմից և երբ է տրված, մինչև երբ է վավեր (առկայության դեպքում լրացվում է նաև հին անձնագրի համարը և սերիան)
1.7 Սոցիալական քարտի համար (առկայության դեպքում)
1.8 Հասցե (մշտական և բնակության տվյալ պահին)
1.9 Հեռախոսահամար
1.10 էլեկտրոնային փոստի հասցե
1.11 Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը, Անուն, ազգանուն, հայրանուն Կրելու ժամանակաշրջան (օր/ամիս/տարի)
3. Ղեկավար պաշտոն
3.1 Ղեկավար պաշտոն, որը Դուք պետք է զբաղեցնեք Համահայկական բանկում o գործադիր տնօրեն (վարչության նախագահ, տնօրինության ղեկավար, գործադիր մարմնի ղեկավար) o գործադիր տնօրենի (վարչության նախագահի) տեղակալ o տնօրինության (վարչության, գործադիր մարմնի) անդամ o գլխավոր հաշվապահ o գլխավոր հաշվապահի տեղակալ o ներքին աուդիտի ղեկավար o ներքին աուդիտի անդամ o մասնաճյուղի կառավարիչ (տնօրեն) o մասնաճյուղի գլխավոր հաշվապահ
3.2 Արդյո՞ք նշանակված եք այդ պաշտում որպես ժամանակավոր պաշտոնակատար o Ոչ, o Այո, նշել նշանակման ամսաթիվը (օր/ամիս/տարի)

3.3 Մանրամասնորեն նկարագրեք Ձեր իրավասություններն ու պատասխանատվության ոլորտները որպես ղեկավար.

4.Կրթություն, որակավորում, աշխատանքային գործունեություն

4.1

Ուսումնական հաստատության անվանումը	Գտնվելու վայրը	Սովորելու ժամանակաշրջանը (–թ.ից մինչև –թ.)	Ֆակուլտետը	Մասնագիտությունը	Գիտական աստիճանը

4.2 Ի՞նչ լեզուների եք տիրապետում

- o հայերեն
- o անգլերեն
- o ռուսերեն
- o այլ *(նշել լեզուն)*

4.3 Նշել վերջին 10 տարվա ընթացքում աշխատանքային գործունեության վերաբերյալ հետևյալ տվյալները.

Աշխատանքի ընդունման և ազատման ժամկետներ	Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Հեռախոսահամար	Պաշտոնը	Ազատման հիմքերը

Նշել միջանկյալ չաշխատած ժամանակահատվածներում ինչո՞վ եք զբաղվել

Չաշխատած ժամանակահատված	Նկարագրություն

4.4 Նշեք Ձեզ անձամբ ճանաչող ֆինանսական համակարգում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ տվյալներ (ներկայացման պահի դրությամբ), որոնք անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրել երաշխավորություն Ձեր անձի վերաբերյալ (եթե այդպիսիք կան)

Անուն, ազգանուն	Աշխատանքի վայր	Պաշտոն	Հասցե	Հեռախոսահամար

5. Ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ

5.1 Արդյո՞ք Դուք օրենքով սահմանված կարգով ճանաչվել եք անգործունակ կամ սահմանափակ գործունակ
- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ

5.2 Արդյո՞ք Դուք ունեցել եք դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործությունների համար
- o Ոչ,
- o Այո, (ներկայացնել մանրամասներ, այդ թվում դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված լինելու վերաբերյալ)

5.3 Արդյո՞ք դատարանի կողմից Դուք զրկված եք ֆինանսական, ապահովագրական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից
- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ

5.4 Արդյո՞ք Դուք ճանաչվել եք սնանկ և ունեք չմարված (չներված) պարտավորություններ
- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ

5.5 Արդյո՞ք Դուք ՀՀ կամ այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից քրեական գործով ներգրավված եք որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ
- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ

5.6 Արդյո՞ք Դուք ՀՀ քրեական օրենսգրքով կամ այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործության համար ենթարկվել եք քրեական պատասխանատվության
- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ

Նախկինում կամ ներկայումս ֆինանսական կազմակերպության ղեկավար հանդիսացող անձինք պետք է պատասխանեն նաև 5.7-ից 5.10 կետերում նշված հարցերին:
Նախկինում կամ ներկայումս ֆինանսական կազմակերպության նշանակալից մասնակից հանդիսացող անձինք պետք է պատասխանեն նաև 5.7 և 5.8 կետերում նշված հարցերին:

5.7 Արդյո՞ք ՀՀ տարածքում կամ այլ պետություններում գործող ֆինանսական կազմակերպություններում Ձեր պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում ֆինանսական կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ, կամ Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակը, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, վատթարացել է:
- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ

5.8 Արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված ֆինանսական կազմակերպությունում Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր գործողությունների կամ անգործության հետևանքով տվյալ ֆինանսական կազմակերպությունը հայտարարվել է անվճարունակ կամ սնանկ:
- o Ոչ
- o Այո, ներկայացնել մանրամասներ

5.9 Արդյո՞ք Դուք, հանդիսանալով ֆինանսական կազմակերպության ղեկավար Ձեր պաշտոնավարման ընթացքում Ձեր նկատմամբ 1 տարվա ընթացքում 3 և ավելի անգամ որպես պատասխանատվության միջոց կիրառվել է տուգանք
- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ

5.10 Արդյո՞ք Դուք զրկվել եք որակավորման վկայականից 1.2 կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքով սահմանված կարգով և հիմքերով

o Ոչ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (այդ թվում՝ որակավորման վկայականից զրկվելու հիմքերը)

6. Նշանակալից մասնակցություն և փոխկապակցվածություն

6.1 Նշեք այն ֆինանսական կազմակերպությունները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) ունեք կամ ունեցել եք նշանակալից մասնակցություն

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Ֆինանսական կազմակերպության անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%),	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

6.2 Իրազեկ լինելու դեպքում նշեք այն ֆինանսական կազմակերպությունները, որոնց կանոնադրական հիմնադրամում (կապիտալում) Ձեր հետ փոխկապակցված անձինք ունեն կամ ունեցել են նշանակալից մասնակցություն

Մասնակցությունները նշել սկսած ներկայումս առկա ամենախոշորներից

Կազմակերպության անվանումը	Ժամանակահատվածը (նախկինում ունեցած մասնակցության համար նշել նշանակալից մասնակից լինելու ժամանակահատվածը)	Մասնակցության չափը (%)	Բաժնետոմսերի քանակը	Ընդհանուր գումարը (դրամով)

6.3 Նշեք Ձեզ հետ փոխկապակցված՝ ֆինանսական համակարգում աշխատող կամ աշխատած անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները (եթե այդպիսիք կան)

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի 1.2 կետում նշված ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող համապատասխան օրենքի համաձայն: Սույն կանոնակարգի իմաստով միևնույն ընտանիքի անդամ են համարվում ծնողները, ամուսինը և երեխաները:

Անուն, ազգանուն	Ժամանակահատված(նախկինում ֆինանսական համակարգում աշխատած անձանց համար նշել համապատասխան ֆինանսական կազմակերպությունում աշխատելու ժամանակահատվածը)	Անձնագրի համար	Փոխկապակցվածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Հեռախոսահամար

7. Դրամային (կամ այլ) պարտավորություններ

7.1 Արդյո՞ք Դուք (կամ Ձեր հետ փոխկապակցված անձինք) ունեք դրամային (կամ այլ) պարտավորություններ այն ֆինանսական կազմակերպության նկատմամբ, որի ղեկավար պետք է հանդիսանաք

o Ոչ ,

o Այո, ներկայացնել մանրամասներ (գումար, ժամկետ, այլ)

7.2 Արդյո՞ք Դուք (կամ Ձեր հետ փոխկապակցված անձինք) ունեք կամ ունեցել եք ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպությունների հանդեպ ժամկետանց պարտավորություններ

- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասներ (ֆինանսական կազմակերպության անվանումը, գումար, ժամկետ, այլ)

8.Այլ տեղեկատվություն

8.1 Այս մասում նշվում է Ձեզ հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները, (բացառությամբ 6.3 կետում նշված անձանց)

Անուն, ազգանուն	Անձնագրի համար	Փոխկապակցվածության ձև	Աշխատանքի վայր	Պաշտոն	Բնակության վայր	Հեռախոսահամար

8.2 Նշեք Ձեզ հետ փոխկապակցված իրավաբանական անձանց վերաբերյալ հետևյալ տվյալները.

Կազմակերպության անվանում	Գտնվելու վայր	Փոխկապակցվածության ձև	Հեռախոսահամար

9. Ձեր կարծիքով արդյոք առկա են այլ կարևոր տեղեկություններ, *որոնք կցանկանայիք նշել*

- o Ոչ,
- o Այո, ներկայացնել մանրամասները

10. Այլ փաստաթղթեր

10.1 Այս կետը լրացվում է միայն բանկի խորհրդի անդամների կողմից.

Ծանոթացել եմ «Խորհրդի անդամների գործունեության ուղեցույց» փաստաթղթի հետ

- o Այո
- o Ոչ

11. Ստորագրություն *(Լրացվում է միայն թղթային տարբերակով ներկայացնելու դեպքում)*

11.1 Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի ստորագրություն և կազմակերպության կնիք (առկայության դեպքում)

Ֆինանսական կազմակերպության կառավարման մարմնի կողմից լիազորված անձի անուն, ազգանուն ----------

Ամսաթիվ (օր/ ամիս/տարի) ----------

Ստորագրություն ----------

Ֆինանսական կազմակերպության կնիք ----------

Հավելված 1-ի

Ենթահավելված 3

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 263-Ն որոշմամբ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համահայկական բանկի խորհրդի անդամների և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ

N/N	Անուն, ազգանուն	Պաշտոն	Անձնագրի սերիա, ում կողմից և երբ է տրված	Սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում)
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
…				

Կից ներկայացվում են նաև Համահայկական բանկի խորհրդի անդամների և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների ինքնակենսագրությունները

Համահայկական բանկի մասնակիցների կողմից լիազորված անձ (անձինք)՝

Ստորագրություն	Անուն, ազգանուն	Անձնագրի սերիան, ում կողմից և երբ է տրված, առկայության դեպքում նաև սոցիալական քարտի համարը
_____	_____	_____
_____	_____	_____
_____	_____	_____

Հավելված 1-ի

Ենթահավելված 3-1

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 263-Ն որոշմամբ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ _____

անուն, ազգանուն, հայրանուն

հայտարարում եմ, որ իմ մասնակցության միջոցով որևէ այլ անձ Համահայկական բանկում անուղղակի մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում:

Հավաստիացնում եմ, որ սույն տեղեկատվությունը արժանահավատ է: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևէ փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ փոփոխության օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Ենթահավելված 3-2

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____

Կազմակերպության անվանումը

հայտարարում է, որ իր մասնակցության միջոցով որևէ այլ անձ Համահայկական բանկում անուղղակի մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում:

Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:

Համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևէ փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին՝ փոփոխության օրվանից հետո 10-օրյա ժամկետում:

Տնօրենի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Կ. Տ.

Հավելված 1-ի

Ենթահավելված 4

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 263-Ն որոշմամբ

Համահայկական բանկի
գործունեության տնտեսական ծրագրի ձև

Բաժին 1. Ընդհանուր դրույթներ
Բաժին 2. Ֆինանսական հեռանկարային զարգացման միտումներ
Բաժին 3. Ներդրումների համար կանխատեսվող շուկաների նկարագրություն
Բաժին 4. Միջոցների ներգրավման հիմնական գործիքներ
Բաժին 5. Բանկի ներքին կազմակերպական կառուցվածք և կառավարման սկզբունքներ
Բաժին 6. Կապիտալ, եկամուտների և ծախսերի հաշվարկ
Բաժին 7. Հնարավոր ռիսկերի գնահատում
Բաժին 8. Խորհրդի կողմից տնտեսական ծրագրի իրականացման նկատմամբ հսկողության սահմանում
Բաժին 9. Այլընտրանքային տնտեսական ծրագիրը (պարտադիր չէ, ներկայացվում է Կենտրոնական Բանկի պահանջով)
Բաժին 10. Այլ դրույթներ
Ենթահավելվածներ և անհրաժեշտ կից տեղեկատվություն:

Հավելված 1-ի

Ենթահավելված 4-ի

Ձև 1

ԲԱՆԿԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿԸ

(կանխատեսումը)

(հազար դրամ)

ԿԱՊԻՏԱԼ	Առաջիկա տարիներ		
	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի
Հիմնական կապիտալ			
Կանոնադրական հիմնադրամ			
Գլխավոր պահուստ			
Չբաշխված շահույթ			
Ընդամենը՝ հիմնական կապիտալ			
Լրացուցիչ կապիտալ			
Վերագնահատման պահուստներ			
Հաշվեկշռի կոնսոլիդացիայի ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ			
Այլ պահուստներ			
Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ			
Ընդամենը՝ լրացուցիչ կապիտալ			
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ (հիմնական կապիտալ + լրացուցիչ կապիտալ)			
Որակական գնահատականներ			
1. Հարաբերակցությունը հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև (%)			
2. Հարաբերակցությունն ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև (%)			
3. Հարաբերակցությունը հիմնական կապիտալի և միջին ընդհանուր ակտիվների միջև			

Հավելված 1-ի

Ենթահավելված 4-ի

Ձև 2

ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ

(կանխատեսումներ)

(հազար դրամ)

	Առաջիկա տարիներ		
	1-ին	2-րդ	3-րդ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Կանխիկ դրամական միջոցներ			
Մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում			
Թղթակցային հաշիվներ			
Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներ			
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակերպությունների նկատմամբ			
Ռեպո համաձայնագրեր			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ			
Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ			
Այլ գործառնությունների գծով ստացվելիք գումարներ, այդ թվում՝			
Ակրեդիտիվներ և բանկային երաշխիքներ			
Ֆինանսական վարձակալություն			
Ստացվելիք շահաբաժիններ			
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ			
Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալներում			
Հիմնական միջոցներ (հանած մաշվածքը)			
Ոչ նյութական ակտիվներ (հանած մաշվածքը)			
Այլ ակտիվներ			
Ընդամենը՝ ակտիվներ			
ՊԱՍԻՎՆԵՐ			
Պարտավորություններ			
Պարտավորություններ ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ			
Բանկերից ներգրաված ավանդներ և ստացված վարկեր			
Թղթակցային հաշիվներ			
Պարտավորություններ այլ ավանդատուների նկատմամբ			
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր			
Կրեդիտորական պարտքեր և տարանցիկ հաշիվներ			
Պահուստներ			
Այլ պարտավորություններ			
Ստորադաս փոխառություններ			
Կապիտալ			
Կանոնադրական հիմնադրամ			
Գլխավոր պահուստ			
Եկամուտների պահուստներ			
Վերագնահատման պահուստներ			
Այլ պահուստներ			
Ընդամենը՝ պասիվներ			

Հավելված 1-ի

Ենթահավելված 4-ի

Ձև 3

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՐԿՆԵՐ

(կանխատեսումներ)

(հազար դրամ)

		Առաջիկա տարիներ		
		1-ն	2-րդ	3-րդ
1	**Տոկոսային եկամուտներ**	**x**	**x**	**x**
1.1	Թղթակցային հաշիվներից ստացված տոկոսներ			
1.2.	ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված միջոցներից			
1.3.	Բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ			
1.4.	Տեղաբաշխված վարկերից ստացված տոկոսներ			
1.5.	Օվերդրաֆտից, օվերնայթից ստացված տոկոսներ			
1.6.	Վարկային քարտերից ստացված տոկոսներ			
1.7.	Բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված միջոցներից			
1.8.	Պետական գանձապետական արժեթղթերից ստացված տոկոսներ, այդ թվում՝ հետգնման պայմանագրերով տնօրինվող արժեթղթերից			
1.9.	Այլ արժեթղթերից ստացված տոկոսներ			
1.10.	Լիզինգից և ֆակտորինգից ստացված տոկոսներ			
1.11.	Այլ տոկոսային եկամուտներ			
Ընդամենը տոկոսային եկամուտներ				
2.	**Տոկոսային ծախսեր**	**x**	**x**	**x**
2.1.	Թղթակցային հաշիվների, ցպահանջ ավանդների և այլ ցպահանջ պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ			
2.2.	ՀՀ ԿԲ-ից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ			
2.3.	Հետգնման պայմանագրերի գծով պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ			
2.4.	Բանկերից և այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ			
2.5.	Ներգրավված ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներ			
2.6.	Միջազգային ֆին. կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ			
2.7.	Օվերդրաֆտի, օվերնայթի դիմաց վճարված տոկոսներ			
2.8.	Տոկոսային ծախսեր բանկի կողմից թողարկված արժեթղթերի գծով			
2.9.	Լիզինգի դիմաց վճարված տոկոսներ			
2.10.	Տոկոսային ծախսեր ավանդների ապահովագրության դիմաց			
2.11.	Ստորադաս փոխառությունների դիմաց վճարված տոկոսներ			
2.12.	Այլ տոկոսային ծախսեր			
Ընդամենը տոկոսային ծախս				
Զուտ տոկոսային եկամուտներ				
3.	**Ոչ տոկոսային եկամուտներ**	**x**	**x**	**x**
3.1.	Ստացված միջնորդավճարներ			
3.2.	Երաշխիքներից, ակրեդիտիվներից, հավատարմագրային կառավարումից ստացված եկամուտներ			
3.3.	Գանձապետարանի սպասարկումից ստացված եկամուտներ			
3.4.	Ածանցյալ գործիքներից զուտ եկամուտներ			
3.5.	Այլ կազմակերպություններում ներդրումներից ստացված եկամուտներ			
3.6.	Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ			
3.7.	Հետգնման պայմանագրերով ձեռք բերված արժեթղթերի վերավաճառքից ստացված զուտ եկամուտներ			
3.8.	Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտներ			

3.9.	Արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերություն			
3.10.	Հիմնական միջոցների օտարումից ստացված զուտ եկամուտներ			
3.11.	Հիմնական միջոցների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ			
3.12.	Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ			
3.13.	Արտասովոր եկամուտներ			
3.14.	Ստացված տույժեր, տուգանքներ			
3.15.	Այլ ոչ տոկոսային եկամուտներ			
Ընդամենը ոչ տոկոսային եկամուտներ				
4.	**Ոչ տոկոսային ծախսեր**	**x**	**x**	**x**
4.1.	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ			
4.2.	Գործուղման ծախսեր			
4.3.	Հատկացումներ ՀՀ սոցիալական ապահովագրության հիմնադրամին			
4.4.	Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ			
4.5.	Ամորտիզացիոն մասհանումներ			
4.6.	Բանկի շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճար			
4.7.	Շենքերի տնտեսական պահպանության ծախսեր			
4.8.	Վարկերի տրամադրման և վերադարձման ծախսեր			
4.9.	Գովազդային, ներկայացուցչական ծախսեր			
4.10.	Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր			
4.11.	Համակարգչային ծրագրերի, սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր			
4.12.	Տրանսպորտային ծախսեր			
4.13.	Կապի և հաղորդակցական միջոցների գծով ծախսեր			
4.14.	Վճարված տույժեր, տուգանքներ			
4.15.	Ուսուցման ծախսեր			
4.16.	Այլ ոչ տոկոսային ծախսեր			
Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր				
Զուտ ոչ տոկոսային եկամուտներ				
5.	**Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին**	**x**	**x**	**x**
5.1.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստին			
5.2.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստին			
5.3.	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստին			
Ընդամենը հատկացումներ				
6.	**Ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված մասհանումների վերադարձ**	**x**	**x**	**x**
6.1.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստից			
6.2.	Վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստից			
6.3.	Արժեթղթերի հնարավոր կորուստների ծածկման պահուստից			
Զուտ մասհանումներ				
Շահույթ՝ մինչև հարկվելը				
Շահութահարկ				
Զուտ շահույթ				
Հաշվարկված շահաբաժիններ				
այդ թվում՝ արտոնյալ բաժնետոմսերի գծով				
սովորական բաժնետոմսերի գծով				
Չբաշխված շահույթ				

Հավելված 1-ի

Ենթահավելված 5

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 263-Ն որոշմամբ

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՁԵՎ

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ

.....

----- ----------20----թ.

Բանկային գործունեության լիցենզիա թիվ .....

Սույն լիցենզիան տրվում է «Համահայկական բանկ» բաց բաժնետիրական ընկերությանը

«Բանկերի և բանկային գործունեության մասին» և «Համահայկական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության դրամով և արտարժույթով բանկային գործունեություն և ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար:

Գրանցման թիվը _____

Հավելված 1-ի

Ենթահավելված 5-1

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 263-Ն որոշմամբ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ես՝ _____

Անուն, ազգանուն, հայրանուն

հայտարարում եմ, որ

1. Ես չունեմ դատվածություն դիտավորությամբ կատարված հանցագործություն կատարելու համար. ☐
2. Ես օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով չեմ զրկվել ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից. ☐
3. Ես չեմ ճանաչվել սնանկ և չունեմ ժամկետանց պարտավորություններ. ☐
4. Իմ գործողությունները նախկինում չեն հանգեցրել բանկի կամ այլ անձի սնանկացմանը. ☐
5. Ես Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործությունների համար չեմ ենթարկվել քրեական պատասխանատվության. ☐
6. Ես այլ պետությունների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցագործությունների համար չեմ ենթարկվել քրեական պատասխանատվության. ☐
7. Ես Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում հանդիսացել եմ ղեկավար կամ նշանակալից մասնակցություն ունեցող անձ, և իմ պաշտոնավարման կամ գործունեության ընթացքում բանկը չի հայտարարվել անվճարունակ կամ սնանկ, և բանկի ֆինանսական վիճակը, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, չի վատթարացել. ☐
   Եթե 7-րդ կետը կիրառելի չէ, ապա վանդակում նշել «Կ/Չ»:
8. Ես Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում չեմ հանդիսացել ղեկավար կամ նշանակալից մասնակցություն ունեցող անձ. ☐
   Եթե 8-րդ կետը կիրառելի չէ, ապա վանդակում նշել «Կ/Չ»:
9. Ես այլ պետությունների բանկերում կամ ֆինանսական կամ ֆինանսավարկային հաստատություններում հանդիսացել եմ ղեկավար կամ նշանակալից մասնակցություն ունեցող անձ, և իմ պաշտոնավարման ընթացքում բանկը, ֆինանսական կամ ֆինանսավարկային հաստատությունը չի հայտարարվել անվճարունակ կամ սնանկ. ☐
   Եթե 9-րդ կետը կիրառելի չէ, ապա վանդակում նշել «Կ/Չ»:
10. Ես այլ պետությունների բանկերում կամ ֆինանսական կամ ֆինանսավարկային հաստատություններում չեմ հանդիսացել ղեկավար կամ նշանակալից մասնակցություն ունեցող անձ. ☐
    Եթե 10-րդ կետը կիրառելի չէ, ապա վանդակում նշել «Կ/Չ»:
11. Ես Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունում հանդիսացել եմ ղեկավար կամ նշանակալից մասնակցություն ունեցող անձ, և իմ պաշտոնավարման ընթացքում տվյալ կազմակերպությունը չի հայտարարվել անվճարունակ կամ սնանկ. ☐
    Եթե 11-րդ կետը կիրառելի չէ, ապա վանդակում նշել «Կ/Չ»:
12. Ես Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունում չեմ հանդիսացել ղեկավար կամ նշանակալից մասնակցություն ունեցող անձ. ☐
    Եթե 12-րդ կետը կիրառելի չէ, ապա վանդակում նշել «Կ/Չ»:
13. Ես այլ պետությունների իրավապահ մարմինների կողմից ներգրավված չեմ որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ. ☐
14. Ես կամ իմ հետ փոխկապակցված անձը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկի կամ վարկային կազմակերպության հանդեպ չունենք ժամկետանց (կետանցված) պարտավորություն. ☐

Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Եթե պնդումը ճիշտ է՝ կատարել նշում համապատասխան վանդակում:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

_____

Կազմակերպության անվանումը

հայտարարում է , որ.

1. Օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով չի զրկվել ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից. ☐
2. Չի ճանաչվել սնանկ և չունի ժամկետանց պարտավորություններ. ☐
3. Իր գործողությունները նախկինում չեմ հանգեցրել բանկի կամ այլ անձի սնանկացմանը. ☐
4. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում հանդիսացել է նշանակալից մասնակցություն ունեցող անձ, և իր գործունեության ընթացքում բանկը չի հայտարարվել անվճարունակ կամ սնանկ, և բանկի ֆինանսական վիճակը, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված չափանիշների, չի վատթարացել. ☐
5. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում չի հանդիսացել նշանակալից մասնակցություն ունեցող անձ. ☐
6. Այլ պետությունների բանկերում կամ ֆինանսական կամ ֆինանսավարկային հաստատություններում հանդիսացել է նշանակալից մասնակցություն ունեցող անձ, և իր գործունեության ընթացքում բանկը, ֆինանսական կամ ֆինանսավարկային հաստատությունը չի հայտարարվել անվճարունակ կամ սնանկ. ☐
7. Այլ պետությունների բանկերում կամ ֆինանսական կամ ֆինանսավարկային հաստատություններում չի հանդիսացել նշանակալից մասնակցություն ունեցող անձ. ☐
8. Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունում հանդիսացել է նշանակալից մասնակցություն ունեցող անձ, և իր գործունեության ընթացքում տվյալ կազմակերպությունը չի հայտարարվել անվճարունակ կամ սնանկ. ☐
9. Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետությունում գրանցված կազմակերպությունում չի հանդիսացել նշանակալից մասնակցություն ունեցող անձ. ☐
10. Կազմակերպությունը կամ իր հետ փոխկապակցված անձը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկի կամ վարկային կազմակերպության հանդեպ չունեն ժամկետանց (կետանցված) պարտավորություն. ☐

Եթե համապատասխան կետերը կիրառելի չեն, ապա վանդակում նշել «Կ/Չ»:

Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական, վարչական և կարգապահական պատասխանատվության:

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Տնօրենի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Կ. Տ.

Եթե պնդումը ճիշտ է՝ կատարել նշում համապատասխան վանդակում:

Հավելված 1-ի

Ենթահավելված 6

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 263-Ն որոշմամբ

ՏԵՂԵԿԱՆՔ

Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերող իրավաբանական անձի վերաբերյալ

1. Իրավաբանական անձ- մասնակցի (կազմակերպության) տվյալներ

1.1. Անվանումը _____

1.2. Գտնվելու վայրը

1.3.Գրանցման ամսաթիվը _____ վայրը _____

օր/ամիս/տարի

2. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (փայեր)

2.1. Բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր թիվը _____ _____

գումար *%*

այդ թվում՝ ձայնի իրավունք տվող _____ _____

գումար *%*

2.2. Յուրաքանչյուր բաժնետոմսի (փայի) ձեռքբերման գինը _____

2.3. Բաժնետոմսի (փայի) ընթացիկ շուկայական արժեքը _____

3. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)

3.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

3.2. Նշել ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)՝

Եթե ներդրումը կատարվում է փոխառության կամ վարկի ստացմամբ, լրացնել 3.3 կետը

3.3. Փոխառության կամ վարկի ստացմամբ կատարվող ներդրումների համար նշել՝

ա) Վարկ/փոխառություն տրամադրողի անունը /անվանումը _____

բ) Գտնվելու/բնակության վայրը

գ) Վարկի/ փոխառության գումարը _____ դ) Գրավի առարկան _____

ե) Վարկի/ փոխառության ստացման պայմանները և ժամկետները

զ) Ի՞նչ աղբյուրներից վարկը/փոխառությունը պետք է մարվի _____

3.4. Եթե մասնակցությունը ձեռք է բերվում այլ մասնակցից անմիջականորեն (ոչ թե կարգավորող շուկայի միջոցով), ապա նշել.

Վաճառողի/փոխանցողի անունը (անվանումը)	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի քանակը	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի/ մասնակցության չափը (%)
1.		
2.		

4. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցությունների վերաբերյալ.

4.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)
1.			
2.			

Սույն կետում նշված անձանց համար լրացնել սույն կանոնակարգի ենթահավելված 8-1-ը:

4.2. Այլ մասնակցության համար՝

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Բաժնետոմսերի քանակը	Անվանական արժեքը (դրամով)
1.			
2.			

5. Տեղեկություններ կազմակերպության ղեկավարների (խորհրդի նախագահ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն և գլխավոր հաշվապահի) վերաբերյալ

ԿԲ կողմից կարող է լրացուցիչ պահանջվել, որ կազմակերպության ղեկավարների համար լրացվի նաև ենթահավելված 2-ը (բանկի մասնակից հանդիսացող իրավաբանական անձի գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի համար ենթահավելված 2-ը պարտադիր է)

Անունը, ազգանունը, անձնագրի համարը	Պաշտոնը	Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում)
1.		
2.		

6. Տեղեկություններ փոխկապակցված անձանց վերաբերյալ

Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն:

Եթե մեկնաբանությունների համար տեղը բավարար չէ, օգտագործեք լրացուցիչ թերթեր

Կազմակերպության անվանումը, անձի անունը, անձնագրի համարը,	Գտնվելու (բնակության վայրը)	Փոխկապակցվածության տեսակը
1.		
2.		

7. Այլ տեղեկատվություն

7.1. Արդյո՞ք կազմակերպությունն ունի 30 օր ժամկետանց/չմարված պարտականություններ: Այո ☐ Ոչ ☐

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

7.2. Արդյո՞ք կազմակերպության մոտ բացակայում են «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված հիմքերը: Այո ☐ Ոչ ☐

«Ոչ» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

7.3. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

8. *Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:*

Ես համաձայն եմ՝ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Տնօրենի անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

օր/ամիս/տարի

Կ. Տ.

Հավելված 1-ի

Ենթահավելված 7

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 263-Ն որոշմամբ

ՏԵՂԵԿԱՆՔ

Համահայկական բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերող ֆիզիկական անձի վերաբերյալ

1. Ֆիզիկական անձ-մասնակցի տվյալներ

1.1. Անունը, ազգանունը, հայրանունը _____

1.2. Սեռը _____ 1.3. Ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____

օր/ամիս/տարի

1.4. Ծննդավայրը _____

1.5. Քաղաքացիությունը _____

1.6. Անձնագրի սերիան և համարը _____

Սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում) _____

1.7. Բնակության վայրը (մշտական և բնակության տվյալ պահին)

1.8. Հեռախոսահամար _____ 1.9. էլեկտրոնային փոստի հասցե _____

1.10. Նշեք նախկինում Ձեր ունեցած մյուս բոլոր անունները, դրանք կրելու ժամանակաշրջանը.

Անունը, ազգանունը, հայրանունը _____

Կրելու ժամանակաշրջանը _____ _____

օր/ամիս/տարի

2. Ձեռքբերման ենթակա բաժնետոմսեր (փայեր)

2.1. Բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր թիվը _____ _____

հատ *%*

այդ թվում՝ ձայնի իրավունք տվող _____ _____

հատ *%*

2.2. Յուրաքանչյուր բաժնետոմսի (փայի) վաճառքի գինը _____

2.3. Բաժնետոմսի (փայի) ընթացիկ հաշվեկշռային արժեքը _____

3. Մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները, ներդրման աղբյուրները

3.1. Նշեք մասնակցության ձեռքբերման ժամկետները և պայմանները.

3.2. Նշել ներդրման աղբյուրները (սեփական, փոխառու)՝

Եթե ներդրումը կատարվում է փոխառության կամ վարկի ստացմամբ, լրացնել 3.3 կետը

3.3. Փոխառության կամ վարկի ստացմամբ կատարվող ներդրումների համար նշել՝

ա) Վարկ/փոխառություն տրամադրողի անուն/ անվանումը _____

բ) Գտնվելու/բնակության վայրը

գ) Վարկի/ փոխառության գումարը _____ դ) Գրավի առարկան _____

ե) Վարկի/ փոխառության ստացման պայմանները և ժամկետները

զ) Ի՞նչ աղբյուրներից վարկը/փոխառությունը պետք է մարվի

3.4. Եթե նշանակալից մասնակցությունը ձեռք է բերվում այլ մասնակցից անմիջականորեն (ոչ թե կարգավորող շուկայի միջոցով), ապա նշել.

Վաճառողի/փոխանցողի անունը (անվանումը)	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի քանակը	Վաճառքի/փոխանցման ենթակա բաժնետոմսերի/ մասնակցության չափը (%)
1.		
2.		

4. Տեղեկություններ այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցությունների վերաբերյալ

4.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս մասնակցության համար՝

